ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴ – ՎԱՃԱՌՔ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԵՎ ԿՐԿՆԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔ

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու դասական աճուրդ վաճառք, վարձակալության մրցույթ և կրկնաճուրդ վաճառք, որը տեղի կունենա 2024 թվականի փետրվարի 22-ին, ժամը 11:00-ին Ստեփանավանի համայնքապետարանում (հասցե՝ ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ., շ. 1, 3-րդ հարկ, նիստերի դահլիճ):

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ – ՎԱՃԱՌՔ

Լոտ 1. Ստեփանավան քաղաքի 0.25 հա մակերեսով, 06-007-1519-0013 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, ջրային նպատակային նշանակության հողամաս՝ հիդրոէլեկտրակայան կառուցելու համար:

1. Մասնակցության վճար 5000 ՀՀ դրամ:
2. Մեկնարկային գինը կազմում է 140000 / մեկ հարյուր քառասուն հազար / ՀՀ դրամ:
3. Նախավճարը կազմում է լոտի մեկնարկային գնի 50%-ը:
4. Քայլի չափը կազմում է մեկնարկային գնի 5%-ը:
5. Հողամասում առկա կոմունիկացիաներ չկան

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Լոտ 1. Ուրասար գյուղի 0.4 հա մակերեսով, 06-106-0133-0008 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամաս՝ 25 տարի ժամկետով:

1. Մասնակցության վճար 5000 ՀՀ դրամ:
2. Տարեկան վճարի մեկնարկային գինը կազմում է 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:
3. Նախավճարը կազմում է լոտի մեկնարկային գնի 50%-ը:
4. Քայլի չափը կազմում է մեկնարկային գնի 5%-ը:
5. Հողամասում առկա կոմունիկացիաներ չկան

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿՐԿՆԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔ

Լոտ 1. Ստեփանավան համայնքի գյուղ ՈՒրասար թիվ 1 հողամաս հասցեով, 0.25482 հա մակերեսով, 06-106-0136-0007 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ կառուցելու համար:

1. Մասնակցության վճար 5000 ՀՀ դրամ:
2. Մեկնարկային գինը կազմում է 240000 /երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
3. Նախավճարը կազմում է լոտի մեկնարկային գնի 50%-ը:
4. Քայլի չափը կազմում է մեկնարկային գնի 5%-ը:
5. Հողամասում առկա կոմունիկացիաներ չկան

Հայտերն ընդունվում են մինչև 2024 թվականի փետրվարի 16-ը Ստեփանավանի համայնքապետարանում յուրաքանչյուր երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00 - 14:00 ընկած ժամանակահատվածի):

Լրացուցիչ տեղեկությունների համար՝
հեռ.՝ (0256) 2 22 33,
էլ.փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com
հասցե՝ ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան 1
Կայք www.stepanavan.am

Ստեփանավանի համայնքապետարան